«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին

Առարկան՝ Կերպարվեստ

Հետազոտող ուսուցիչ՝Մուրադյան Վարդանուշ

Ուսումնականա հաստատություն՝ Կ.Զարյանի անվան համար 117 հիմնական դպրոց

Երևան 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա- Վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- ինչ պետք է իմանալ վեց տարեկանների նախադպրոցական պատրաստվածության վերաբերյալ:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Նախադպրոցական տարիքը բնութագրում է երեխայի զարգացման սոցիալական նոր իրադրության առաջացմամբ: Շրջապատող մարդկանց մեջ նախադպրոցականի գրաված տեղը էականորեն տարբերվում է այն տեղից, որը բնորոշ է վաղ մանկական տարիքի երեխայի համար: Երեխան տարրական պարտականություններ է ձեռք բերում: Նոր ձևեր է ստանում մեծերի հետ երեխայի ունեցած կապը: Համատեղ գործունեությունը հերթափոխվում է մեծահասակների ցուցումների ինքնուրույն կատարմամբ: Առաջին անգամ հնարավոր է դառնում քիչ թե շատ հետևողականորեն և ըստ որոշակի ծրագրի երեխային գիտելիքներ սովորեցնելը:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Նապադպրոցականի զարգացման սոցիալական իրադրության առանձնահատկությունները դրսևորվում են գործունեության նրա համար բնորոշ տեսակներում, առաջին հերթին՝ դերային խաղում: Մեծահասակների կյանքին հաղորդակից դառնալու ձգտումը, զուգորդվելով անհրաժեշտ գիտելիքների ու կարողությունների բացակայության հետ, հանգեցնում է այն բանին, որ երեխան այդ կյանքի մասին տեղեկությունները յուրացնում է իր համար մատչելի խաղի միջոցով: Նախադպրոցական հասակի երեխաների զարգացման համար հատկապես նպաստավոր պայմաններ են ստեղծվում նախադպրոցական հասարակական դաստիարակության համակարգում:

Խաչվող հասկացությունները՝

- Կարողությունների և հմտությունների զարգացում:
- Ժամանակ և տարածություն:

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Դաստիարակություն
2. Մանկավարժություն

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Դպրոցը սոցիալ–մանկավարժական համակարգ է, որի կրթական միջավայրում աշակերտներն ինտեգրվում են ուսումնական, սոցիալ–մշակութային և հոգեբանական հարմարման արդյունքում: Սովորողների՝ կրթական նոր միջավայրում ակտիվ ինտեգրման գործընթացում ձևավորվում են ուսումնական գործունեության արդյունավետ իրականացման նոր կարողություններն ու հմտությունները, խմբային և անհատական ուսումնահետազոտական աշխատանքի ձևերի յուրացումը:

Ակնհայտ է, որ դպրոցի մանկավարժական կարևորագույն խնդիրն է հատկապես առաջին դասարանցիների հետ աշխատանքը՝ ուղղված նոր համակարգում նրանց արագ և արդյունավետ ինտեգրմանը, սոցիալական հարաբերությունների նոր համակարգում հարմարմանը, սոցիալական նոր դերի յուրացմանը:

Դպրոցի խնդիրն է սովորողի համար կենսական այդ բարդ փուլում աջակցել նրան. ուսուցման նոր պայմաններում որքան հնարավոր է արագ ինտեգրվելու աշակերտության շարքերում: Չնայած նպատակային, բովանդակային և գործընթացային բաղադրատարրերում գոյություն ունեցող տարբերություններին՝ կրթական յուրաքանչյուր աստիճանում հարմարման և ինտեգրման գործընթացները բնութագրվում են ընդհանուր և առանձնահատուկ տարբերություններով, որոնք արտացոլում են կրթական տարբեր աստիճանների կապակցվածության, շարունակականության և սահուն անցման հիմնախնդիրը:

Դպրոցական կյանքի առաջին շրջանում են ձևավորվում կրթական դրդապատճառները, որոնք հիմնվում են արժեքային կողմնորոշումների, կենսական իդեալների, պահանջմունքների վրա: Այս տարիքում կենսական ներուժը կենտրոնանում է նոր փոխհարաբերությունների, շփումների, հաղորդակցական ոլորտի ընդլայնմանը, սովորողի սոցիալական դերի յուրացմանը: Սկսվում է ակտիվ կենսադիրքի, աշխարհայացքի ձևավորման շրջանը, աճում են սոցիալ–հոգեբանական և մշակութային պահանջմունքները:

Աշխատանքի նպատակն է բացահայտել, թե արդյոք վեցամյա երեխան է պատրաստ դպրոց հաճախել:

Հետազոտության խնդիրներն են

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,
2. բացահայտել ծնողների դերը վեցամյա երեխայի դպրոցի պատրաստվածության հարցում:
3. առանձնացնել այն գործոնները, որոնք մեծ դեր են կատարում և նպաստում են վեցամյա երեխային պատրաստ լինել դպրոց հաճախել:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական նյութից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին

Երեխայի հոգեկան զարգացման պարբերացման մեջ նախադպրոցական տարիքն ունի որոշակի սահմաններ՝ 3-ից 7 տարեկան: 7 տարեկանի «ճգնաժամ»ը անցումային տարիք է և կարծես թե բաժանում է նախադպրոցական տարիքը կրտսեր դպրոցական տարիքից: Այնուամենայնիվ,այսօր երեխաները դպրոց են ընդունվում ոչ թե 7, այլ 6 տարեկանից: Սրա հետ կապված առաջանում են բազում հարցեր: Եթե 6 տարեկան երեխան սկսում է սովորել դպրոցում, արդյո՞ք սա նշանակում է, որ նա արագ է զարգանում, օգտակար է, արդյո՞ք այս տարիքում ներառվել ուսումնական գործունեության մեջ, ի՞նչ է նշանակում հոգեբանական պատրաստվածություն դպրոցին:

6 տարեկան առաջին դասարանցին իր հոգեկան զարգացման մակարդակով մնում է դեռ նախադպրոցական: Նա պահպանում է այդ տարիքին բնորոշ մտածողության առանձնահատկությունները, նրա մոտ գերակայում է ոչ կամային հիշողությունը, ուշադրության յուրահատկությունն այնպիսինն է, որ երեխան ընդունակ է արդյունավետ զբաղվել միևնույն գործով 10-15 րոպեից ոչ ավել:

6 տարեկան երեխայի անձի առանձնահատկությունները լրացուցիչ դժվարություններ են առաջացնում ուսման գործընթացում: Ուսման խնդիրներին համապատասխանող ճանաչողական դրդապատճառները դեռ անկայուն և իրավիճակային են, դրա համար էլ դասերի ժամանակ երեխաների մեծամասնության մոտ այն դրդապատճառները դրսևորվում և պահպանվում են ուսուցչի ջանքերի շնորհիվ: Բարձր ինքնագնահատականը շատ երեխաների մոտ հանգեցնում է նրան, որ նրանք դժվարանում են հասկանալ մանկավարժական գնահատման չափանիշները: Իրենց ուսումնական գործունեության գնահատականը նրանք համարում են ամբողջ անձի գնահատական: Բացասական գնահատականները, դիտողությունները նրանց մոտ առաջացնում են տագնապայնություն, անհարմարության վիճակ, ինչի հետևանքով աշակերտներից շատերը դառնում են պասիվ: Երեխայի հուզական վիճակից կախված վարքի անկայունությունը դժվարացնում է ինչպես մանկավարժի հետ հարաբերությունները, այնպես էլ դասի ժամանակ երեխաների կոլեկտիվ աշխատանքը:

Հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին բարդ կազմավորում է, որը պահանջում է դրդապատճառային, ինտելեկտուալ, կամային ոլորտների զարգացման բարձր մակարդակ: Սովորաբար առանձնացնում են հոգեբանական պատրաստվածության երկու ասպեկտներ՝ **անձնային** և **ինտելեկտուալ**: Երկուսն էլ կարևոր են ինչպես ուսումնական գործունեության հաջող ընթացքի, այնպես էլ նոր պայմաններին արագ հարմարման համար:

Նոր սոցիալական դիրքի նկատմամբ երեխայի ձգտումը նախադրյալ է և հիմք կրտսեր դպրոցական տարիքում հոգեբանական շատ առանձնահատկությունների կայացման համար: Մասնավորապես, պատասխանատվությունը դպրոցական պարտականությունների կատարման համար. երեխան սկսում է կատարել ոչ միայն իրեն հետաքրքիր առաջադրանքները, այլև ցանկացած ուսումնական աշխատանք:

Դպրոց ընդունվող երեխայի համար կարևոր է նաև ուսուցչի, տարիքակիցների և իր նկատմամբ վերաբերմունքը: Նախադպրոցական տարիքի վերջում պետք մեծահասկների հետ հաստատվի ոչ իրավիճակային-անձնային շփում:

Ուսուցանման դաս-դասարանային համակարգը ենթադրում է ոչ միայն ուսուցչի հետ, այլև այլ երեխաների հետ հատուկ հարաբերություններ: Ուսումնական գործունեությունն իր բնույթով կոլեկտիվ գործունեություն է: Աշակերտները պետք է սովորեն միմյանց հետ գործնական հաղորդակցմանը, արդյունավետ փոխազդելու կարողությանը՝ կատարելով համատեղ ուսումնական գործողություններ: Հասակակիցների հետ շփման նոր ձևը հաստատվում է դպրոցական ուսուցման հենց սկզբից:

Հոգեկան զարգացման բարձր մակարդակով 6 տարեկան երեխաների համար բնութագրական է համագործակցային-մրցակցային շփումը տարիքակիցների հետ: Նրանք հետևում են ընդհանուր խաղային նպատակին, բայց միմյանց համարում են մրցակիցեր, հակառակորդներ: Նրանք պլանավորում են իրենց գործողությունները՝ կանխատեսելով արդյունքը, հետևելով ընկերոջ գործողություններին, փորձելով նրան խանգարել:

Որպեսզի ավելի պարզ դառնա 6 տարեկան երեխայի ուսուցման հիմնախնդիրը, դիտարկենք նրա հոգեբանական և ֆիզիոլոգիական վիճակն ավելի մանրամասնորեն:

1. Ակնհայտ է, որ 6 տարեկանում երեխան պահպանում է դեռևս նախադպրոցականին հատուկ մտածողության որակներ: Նրա մոտ գերիշխող է ոչ կամածին ուշադրությունն ու հիշողությունը, նա առավելապես հիշում է և կարողանում է ուշադրությունը կենտրոնացնել այն գործունեության և նյութի վրա որն իրեն հետաքրքիր է, այլ ոչ «անհրաժեշտ»: Ուշադրության յուրահատկությունն այնպիսին է, որ նա կարողանում է այն կամածին կերպով սևեռել մեկ գործունեության վրա' 10-15 րոպեից ոչ ավել[1]:

2.Նրան բնորոշ է բարձր ինքնագնահատականը, նա դժվարանում է համապատասխան կերպով գնահատել իր հաջողություններն ու անհաջողությունները, որը դժվարություններ է առաջացնում ուսուցչի գնահատականներն ու հանձնարարությունները ճիշտ ընկալելու և կատարելու առումով:

3. Իմացական դրդապատճառներն այս տարիքում դեռ լիովին ձևավորված չեն: Նույնիսկ 7 տարեկանում երեխաներից շատերի մոտ դպրոց գնալու դրդապատճառները մակերեսային են: Երեխան ուզում է դպրոց գնալ, ոչ թե գիտելիքներ ձեռք բերելու, սովորելու համար, այլ գեղեցիկ տետրեր, գրիչներ, նոր հագուստ, պայուսակ նվեր ստանալու համար: Դպրոցին պատրաստվածության հիմնական պայմանը իմացական դրդապատճառների ձևավորվածությունն է[2]:

4.Ինչպես գիտենք դպրոցական կյանքի մեջ ներգրավվելու առաջին իսկ օրվանից երեխային սովորեցնում են ինքնակազմակերպման, ինքնավերահսկողության և համապատասխան

[1] А.Л. Венгер. Психологическая готовность детей к обучению в школе. Развитие мышления и умственное воспитание дошкольника. М., 1985.

[2] Л.С. Рубинштейн. Основы общей психологии.

ինքնագնահատման, համենայն դեպս այդպես պիտի լինի: Սակայն 6 տարեկան երեխայի համար նման կամային կարողություններ դրսևորելը գրեթե անհաղթահարելի դժվարություն է: Ակնհայտ է, որ նրան սովորեցնել պատասխանատվություն կրել սեփական արարքների համար, նպատակասլաց գործողություններ կատարել գիտելիքներ ձեռք բերելու ուղղությամբ, համբերություն դրսևորել անհաջողությունների և դժվարությունների հանդեպ գրեթե անհաղթահարելի դժվարություն է ուսուցչի համար:

5.Ինչպես հայտնի է գլխուղեղի մորֆոլոգիական փոփոխությունները տեղի են ունենում ամբողջ կյանքի ընթացքում: Միայն 7 տարեկանից հետո է, որ երեխայի գլխուղեղի կառուցվածքը նմանվում է մեծահասակի գլխուղեղին: Նեյրոնները ծածկվում են սպիտակուցային միելինային թաղանթով, որը մեկուսացնում և պաշտպանում է նեյրոնները: Քանի դեռ այդ գործընթացն ավարտված չէ, նյարդային ազդակներն ավելի դանդաղ են փոխանցվում: Այդ պատճառով երեխան ավելի արագ է հոգնում, վատ է տրամաբանում, ինֆորմացիան դանդաղ է յուրացնում և, զուտ ֆիզիոլոգիական պատճառներով, չի կարողանում ուշադիր լինել ամբողջ դասի ընթացքում:

Ուստի անհրաժեշտ է նրանց դասերը 20-25 րոպեն մեկ անգամ ընդմիջել՝ ուղեղային լարվածությունը թուլացնող ակտիվ, ֆիզիկական խաղերով: Սակայն գաղտնիք չէ, որ ժամանակակից դպրոցում նման խաղեր խաղալ հնարավոր չէ առանց ավագ դասարաններին անհանգստացնելու, իսկ խաղասենյակներ դպրոցներում առայժմ նախատեսված չեն:

6. Ինֆորմացիայի հոսքը այս տարիքում արթնացնում է, սովորաբար այս տարիքում մարած, ցերեկային քնի պահանջ: Եթե այս հանգամանքը անտեսենք, ինչը սովորաբար այդպես էլ լինում է, հեշտությամբ կարող ենք խթանել երեխաների մոտ նևրոզների առաջացումը: Միայն 7 տարեկանից հետո, երբ գլխուղեղի զարգացումը հասնում է դպրոցի պահանջները բավարարելու մակարդակին, երեխաները կարողանում են վերջին դասա ժամերն անցկացնել առանց քնկոտության:

7. Մեկ տարի տարբերությունն այս տարիքում նկատելի է նույնիսկ արտաքինից, 7 տարեկանները հասակով բարձր են 7-8 սմ-ով: Իսկ նստարաններն ու սեղանները դպրոցներում առայժմ նախատեսված են, ինչպես գիտենք, հենց 7 տարեկանների համար: 6 տարեկանի մկանային համակարգն այնքան զարգացած չէ, որ կարողանա այդ անհարմարավետ նստարանի վրա երկար ճիշտ պահել մեջքը: Մկանները մարզելու և մանկական հրապարակում վազվզելու համար իր հնարավորությունները շատ ավելի քիչ են քան նույն տարիքի մանկապարտեզ հաճախող երեխայինը: Հետևաբար 6 տարեկան դպրոցականի ճիշտ և գեղեցիկ կեցվածք ունենալու հնարավորությունները զգալիորեն նվազում են: Ոչ ճիշտ նստելը, երկարատև գրաֆիկական աշխատանքները կարող են բերել կեցվածքի խանգարումների, ողնաշարի ծռման, գրող ձեռքի դաստակի ձևափոխման: Ավագ նախադպրոցականների մոտ լավ զարգացած են իրանի և վերջույթների խոշոր մկաններն ու ոսկորները, որոնց շնորհիվ նրանք կարողանում են այնպիսի բարդ շարժումներ կատարել ինչպիսիք են վազքը, ցատկը, թռչկոտելը, սողալն ու ծառ բարձրանալդ, լողալն ու դահուկներով սահելը: 6-7 տարեկանում երեխայի օրգանիզմը ակտիվորեն աճում և զարգանում է, սրտանոթային համակարգի հուսալիությունն ու պահեստային հնարավորությունները ավելանում են, վերակառուցվում և

ակտիվորեն զարգանում են շնչառական և էնդոկրին համակարգերը:

Չափերով, կառուցվածքով և կազմությամբ ձևափոխվում են կմախքի ոսկորները, բայց ոսկրացման գործընթացն առայժմ ավարտված չէ, իսկ որոշ բաժիններում դեռ նոր է սկսվում: Այդ թվում նաև ավարտված չէ դաստակների, մատների ֆալանգների ոսկրացումը, և դա կարևոր է իմանալ ու հաշվի առնել երեխայի ուսուցումը կազմակերպելու ժամանակ: Մանկական օրգանիզմը, որում տարբեր օրգաններ և օրգան-համակարգեր զարգանում են տարբեր արագությամբ, չի հասցնում հարմարվել այդ փոխություններին: 7 տարեկանում ոտքերի ոսկորներն ավելի արագ են զարգանում քան մկանները, որի արդյունքում երեխան ոտքերում հաճախակի ցավեր է ունենում: Այս տեսակ բոլոր փոփոխություններն իրենց սկիզբն առնում են 6 տարեկանում: Ամբողջ օրգանիզմը մի տեսակ անհարմարավետություն է զգում, արդյունքում թուլանում է իմունային համակարգը, հաճախակիանում են հիվանդությունները:

8. 6 տարեկան երեխային շատ ավելի դժվար է հաջողվում գրելու հմտություններ ձեռք բերել, քանի որ դաստակի մանր մկաններն ու ոսկորները դեռևս բավարար զարգացած չեն, այս է պատճառը, որ փոքրիկ երեխաները գրելիս և մանր գրաֆիկական վարժություններ կատարելիս շուտ հոգնում են: Երբ զրուցում ես կրտսեր դպրոցի ուսուցիչների հետ, պարզվում է, որ երեխաների ուսուցման գործընթացում առավելագույն խնդիրներն ու դժվարություններն առաջանում են նրանից, որ երեխայի ձեռքը պատրաստ չէ գրելուն: Այս դեպքում երեխան դրա համար հոգեկան և ֆիզիկական մեծ ճիգեր է գործադրում, որը խիստ լարում է առաջացնում գլխուղեղում՝ վնասելով զարգացման բնականոն ընթացքը:

9. Կարդալու և գրելու հմտությունների զարգացմանը խանգարում է նաև երեխայի տեսողությունը: Երեխան հեռատես է ծնվում: 4 տարեկանին մոտ նա կարող է արդեն խորանարդիկների վրա մեծ տառերով բառեր կազմել կամ մագնիսներով գրատախտակի վրա գրել մի քանի տառ, և բառ կազմել: Երկար տառերի և բառերի հետ աշխատել, գրել և կարդալ կարողանալու համար երեխայի տեսողությունը պատրաստ է լինում միայն 7 տարեկանից հետո: 6 տարեկանը մեծ լարվածության և հոգնածության արդյունքում կարող է կարճատեսություն ձեռք բերել արդեն կրտսեր դպրոցում[3]:

❖ Վաղ ուսուցման վերաբերյալ տարբեր տեսակետներ

Վերջին տարիներին նախադպրոցականների մոտ ավելի ու ավելի է նկատվում դպրոց գնալու ցանկության բացակայություն: Երեխաների աչքում դպրոցի արժեզրկումը գիտնականհոգեբաններն ուղղակիորեն կապում են ուսուցման մեջ նրանց վաղ ներգրավելու հետ: Դա պայմանավորված է այն բանով, որ 0-7 տարեկանն ընկած հատվածում երեխայի անձի և հուզական ոլորտի ձևավորման հիմքերն են դրվում: Դրանցից է ապագայում կախված երեխայի բարոյահոգեբանական նկարագիրը, նրա արժեքային համակարգը, և այն անձնային որակների առկայությունը, ինչպիսիք են պատասխանատվությունը, նպատակասլացությունը, ազնվությունն ու ապրումակցելու

[3] О. П. Солодилова. Шпаргалка по возрастной психологии. М., Велби, 2005г., էջ 125

կարողությունը, նախաձեռնողականությունն ու արժանապատվության զգացումը և այլն: Այս բոլոր որակների ձևավորման վրա ազդում են ծնողներն ու երեխայի անմիջական միջավայրը:

Իր կյանքի համար նման կարևոր նշանակություն ունեցող շրջանում ուսուցման և գիտելիքների ձեռքբերման համար անհրաժեշտ բոլոր ուժերն ու էներգիան նա ծախսում է իր անձի ձևավորման հաշվին: Ոչ ոք չի կարող հերքել, որ այս տարիքում երեխան հաճախ շատ ընկալունակ է և կարող է արագ ընկալել ինֆորմացիան' ու դրանով զարմացնել ծնողներին: Սակայն այս փուլում շատ կարևոր է երեխայի համար դերային, դերասյուժետային և օրենքներով խաղերի միջոցով զարգացնել նրա սոցիալական հմտություններն ու կամային որակները, ապրումակցելու և խմբով որևէ գործունեություն իրականացնելու, որոշում կայացնելու, ներելու, հանդուրժելու, իր տեսակետը պաշտպանելու կարողությունը: Այս փուլում ձևավորվում է երեխայի նախնական աշխարհայացքն ու վերաբերմունքը աշխարհի հանդեպ, մարդկային փոխհարաբերությունների վերաբերյալ տեսակետներն ու բարոյական արժեքները:

Երեխայի վաղ ուսուցման կապակցությամբ Դ. Բ. Էլկոնինն ասում է, որ զարգացման մեկ այլ ավելի բարձր մակարդակի անցումը պայմանավորված է նրանով, թե որքան լիարժեք է ապրվել նախորդ փուլը, որքան են հասունացել այն ներքին հակասությունները, որոնք կարող են լուծվել այդ անցման ճանապարհով: Եթե այդ անցումը տեղի ունենա նախքան այդ հակասությունների հասունացումը, ապա զգալիորեն կտուժի երեխայի անձի ձևավորումը: Ըստ նրա' մեկ տարով նախադպրոցական տարիքի կրճատումը կարող է խաթարել երեխայի զարգացման կայացած գործընթացը, և օգուտ չտա:

Նա գտնում է, որ 6 տարեկանում դպրոց տանելու փոխարեն ավելի նպատակահարմար է ընդլայնել մանկապարտեզների նախապատրաստական խմբերն ու ակտիվորեն պատրաստել երեխաներին դպրոցին: Քանի որ մանկապարտեզում երեխաներն ավելի լիարժեք կյանքով են ապրում և ավելի կենսախինդ են քան նրանց հասակակից դպրոցականները[4]:

Ռ Շտայները, վալդորֆյան դպրոցի հիմնադիրը, պնդում է, որ մինչև 7 տարեկանը հակացուցված է երեխային ինտելեկտը զարգացնող խնդիրներ տալը, քանի որ նրա կարծիքով ինտելեկտի զարգացումը շատ մեծ էներգիա է պահանջում երեխայից, որը կարող է չբավականացնել նրա ֆիզիկական, հուզական և հոգևոր զարգացման համար, արդյունքում ինտելեկտուալ լավ զարգացած երեխան կարող է տարբերվել իր ֆիզիկական թուլությամբ: Իսկ նրան հակառակ Գլեն Դոմանը խորհուրդ է տալիս երեխային սովորեցնել բարուրից, այն էլ ինտենսիվ' խթանելով նրա ուղեղի արագ զարգացումը:

Իսկ հոգեբանական գիտությունների դոկտոր Ա Լ. Վենգերը բացասական է արտահայտվում վաղ ուսուցման մասին: Նա նույնիսկ գտնում է, որ 6 տ. երեխային չի կարելի պարտադրել դպրոցական ուսուցման: Նրա կարծիքով նախադպրոցական տարիքում ավելի կարևոր է զարգացնել ընդունակությունները, որին նպաստում են խաղը, նկարչությունը, տարբեր առարկաներ

[4] Г. Крайг, Д. Бокум. Психология развития. 9-е издание, Питер 2007г., էջ 88

պատրաստելն ու այլ նախադպրոցական զբաղմունքները: Նույնիսկ եթե երեխան լիարժեք պատրաստ է դպրոցին, իր որոշակի անձնային առանձնահատկությունների պատճառով, այնուամենայնիվ նա կարող է դժվարություններ ունենալ սովորելու ընթացքում: Քննարկենք 6-7 տ. երեխաների զարգացման երեք տարբերակները, որ առաջարկել է Ա. Լ. Վենգերը:

Զարգացման առաջին տարբերակը նա անվանել է «տագնապայնություն», որը կախված է իրավիճակից, բայց այն կարող է վերածվել նաև անձնային առանձնահատկության: Բարձր տագնապայնությունը կայունություն է ձեռք բերում, երբ ուսուցիչների և ծնողների կողմից անընդհատ դժգոհություններ, դիտողություններ, նըկատողություններ, բացասական գնահատականներ են հնչում երեխայի հասցեին: Տագնապայնության աճի և նրա հետ կապված ցածր ինքնագնահատականի հետ միասին նվազում են ուսումնական ձեռքբերումները, ամրանում է անհաջողությունը:

Զարգացման երկրորդ տարբերակը՝ «ցուցամոչությունն» է: Անձի այս առանձնահատկությունը կապված է միշտ ուշադրության կենտրոնում լինելու և հաջողության հասնելու չափազանց մեծ ցանկության հետ: Այս առանձնահատկությամբ երեխաները իրենց ձևավոր են պահում և նրանց հիմնական նպատակն է ուշադրության արժանանալ՝ նույնիսկ արգելված արարքներ կատարելու միջոցով: Զարգացման երրորդ տարբերակը ստացել է «փախուստ իրականությունից» անվանումը: Սա այն դեպքն է, երբ երեխայի տագնապայնությունը զուգորդվում է ցուցամոլությանը: Սակայն դերասանություն անելուն խանգարում է տագնապը և նրանք փոքր ինչ մի կողմ քաշված են լինում՝ աշխատելով արդարացնել մեծերի բոլոր պահանջները: Ուշադրության չբավարարված պահանջը բերում է տագնապի ավելացման և պասիվության: Գ. Գ. Կրավցռվի և Ե. Ե. Կրավցռվա յիտվյալների համաձայն 7 տ. դպրոց հաճախող երեխաների մեկ երրորդը պատրաստ չէ դպրոցական ուսուցմանը:

6 տ. երեխաների մոտ իրավիճակը շատ ավելի բարդ է: Նրանց մեջ կան երեխաներ որոնք պատրաստ են ուսուցման, սակայն՝ փոքրամասնություն են կազմում:[5]

Կրտսեր դպրոցական հասակի վերջում սովորողների մեծամասնության մոտ գործունեության նպատակի ու դրդապատճառի միջև կանխամտածված ձևով կապեր հաստատելու ունակություն է զարգանում:Գործողության կատարման ընդհանուր իմաստի փոփոխման դեպքում երեխաները կարողանում են փոխել կոնկետ նպատակը և վերակառուցել իրենց գործողությունները:

Երեխայի կյանքի առաջին վեց տարիների ընթացքում ուսումնադաստիարակչական պրոցեսում պետք է հաշվի առնել, որ շրջապատողների հետ երեխայի փոխհարաբերությունների եղանակների ու գիտելիքների և, մյուս կողմից, հոգեկան գործունեության եղանակների զարգացման մակարդակի միջև եղած հարաբերությունը զարգանում է երկու կողմից: Այսպես, երեխայի գործունեության հնարավորությունների ընդլայնումըև նրա դրդապատճառներիփոփոխությունները հանգեցնում են շրջապատող մարդկանց հետ նրա ունեցած փոխհարաբերությունների ողջ համակարգի փոփոխման անհրաժեշտությանը:

Հոգեբաններն այն կարծիքին են, որ երեխայի անձը որոշակիորեն սկսում է ձևավորվել արդեն

[5] И.В. Шаповаленко. Возрастная психология. М., Гардарики, 2005г.., էջ 55

նախադպրոցական տարիքում: Երեխայի անձի զանգացումն իր մեջ ներառում է նրա հուզական-կամային ոլորտի, ինչպես նաև հետաքրքրությունների և վարքի դրդապատճառների ձևավորումը: Իսկ սա, իր հերթին, որոշվում է սոցիալական միջավայրում և, առաջին հերթին, երեխայի զարգացման տվյալ աստիճանի համար տիպական այն հարաբերություններով, որոնք հաստատվում են նրա ու չափահասների միջև:

Վաղ մանկության տարիներին երեխան չի հասկանում չափահասի ու նրա ազդեցության նշանակությունը, չի հասկանում նաև ինքն իրեն: Կոնկրետ իրադրության մեջ երեխան համատեղ կոնկրետ գործունեություն է կատարում չափահասի հետ: Վերջինս այդ իրադրության կենտրոնական օղակն է, իսկ երեխան կատարում կամ չի կատարում այն, ինչ նրանից պահանջում է չափահասը:բԱյստեղ դեռևս չի առաջանում հնազանդության , « անել թե չանել» հարցի մասին խորհրդածելու խնդիր կամ դրդապատճառների պայքար: Երեխայի վարքն իմպուլսային է:

Արդեն նախադպրոցական տարիքի սկզբում երեխայի և չափահասի միջև ծագում են սկզբունքորեն նոր փոխհարաբերություններ: Երեխան սկսում է իրեն առանձնացնել մեծահասակներից : «Ես ուզում եմ » արտահայտության հաճախակի օգտագործումը ցույց է տալիս , որ երեխան սկսում է իրեն առանձնացնել մեծահասակներից:

Ակտիվ խոսքի զարգացումը կյանքի առաջին վեց տարիների ընթացքում նպաստում է երեխայի հետագա զարգացմանը; Ուստի կարևոր է ծնողի, հաճախած խմբակների, նախադպրոցական կրթության, անձի սոցիալականացման դերն այս հարցում:

Զարգացման գործում ձեռք բերած հաջողությունները որակապես փոխում են փոքրիկի ողջ վարքը: Թեև մեծահասակի դերը մնում է առաջատար, սակայն իր գործնական կյանքի նեղ ոլորտում և իր սահմանափակ հնարավորությունների շրջանակներում երեխան ձգտում է գործել առանց մեծերի օգնության: Նոր միտումները մեծացնում են երեխայի ակտիվությունը և նրա ու մեծահասակների միջև նոր փոխհարաբերություններ են առաջացնում: Կյանքի մի շրջան կա, որն ընդունված է համարել ճգնաժամային (երրորդ տարվա ճգնաժամ), քանի որ մեծահասակի համար դժվար է դառնում իր նեգատիվիզմի ու կամակորության շնորհիվ անտանելի դարձած երեխայի հետ շփվելը: Ճգնաժամից դուրս են գալիս ճիշտ պլանավորված աշխատանքի արդյունքում: Շատ կարևոր է ճիշտ ժամանակին ձեռնարկել որոշ քայլեր, հետագայում բարդույթներից խուսափելու համար:

Եզրակացություն

Երեխաները, որոնք մեկ տարի ավել են խաղում, մանկավարժների և հոգեբանների կարծիքով, ավելի հեշտ են հարմարվում դպրոցին, ավելի բարձր արդյունավետություն են ցուցաբերում ուսման մեջ: Դա չի նշանակում, որ նրանք բոլորը գերազանց են սովորում, սակայն նրանք ավելի լայն հնարավորություններ են ունենում զարգանալու և դիմանալու տարբեր դժվարությունների, որ իրենց առաջ ծագում է դպրոցական կյանքի ընթացքում: Այնուամենայնիվ համաշխարհային մանկավարժության մեջ ընդունված և լայն կերպով կիրառվում է 6 տ. և նույնիսկ ավելի փոքր տարիքի երեխաների ներգրավումը ուսումնական գործընթացի մեջ: Այստեղ տարբեր են միայն ուսուցման բովանդակությունն ու մեթոդները: Այդ պատճառով ավելի նպատակահարմար է մանրամասն քննարկել այդ կրթության կազմակերպման ձևերն ու մեթոդները:

Ցանկալի է իհարկե երեխաների հետ զարգացնող մի շարք աշխատանքներ տանել նախքան խիստ նորմավորված դպրոցական առօրյայի մեջ մտնելը' դրանով երեխային պատրաստելով ուսուցմանը: Համենայն դեպս պետք չէ մոռանալ, որ 6 տ, երեխայի դպրոցական ռեժիմը պիտի խնայող լինի և ոչ մի դեպքում չի կարելի անտեսել նրա հոգեբանական առանձնահատկություններն ու իմացական գործընթացների թերի ձևավորվածությունը:

Այլապես կարելի է խիստ վնաս հասց նել նրա հոգեկան և նույնիսկ ֆիզիկական զարգացման գործընթացներին: Այնուամենայնիվ մենք չենք կարող պնդել, որ բոլոր 6 տարեկանները պատրաստ են դպրոցական ուսուցման կամ հակառակը: Սակայն, ակնհայտ է այն փաստը, որ 6 տարեկան երեխան մեծ փոփոխություններ է ապրում իր հոգեկան և ֆիզիկական ոլորտներում նախքան 7 տարին լրանալը: Եվ ասել, որ 6 տարեկան երեխան պատրաստ է դպրոցին կարող է միայն հոգեբանը՝ կոնկրետ երեխայի հետ հետազոտական աշխատանքներ կատարելուց հետո:

Օգտագործված գրականության ցանկ

1. А.Л. Венгер. Психологическая готовность детей к обучению в школе. Развитие мышления и умственное воспитание дошкольника. М., 1985.
2. Л.С. Рубинштейн. Основы общей психологии.
3. О. П. Солодилова. Шпаргалка по возрастной психологии. М., Велби, 2005г., էջ 125
4. Г. Крайг, Д. Бокум. Психология развития. 9-е издание, Питер 2007г., էջ 88
5. И.В. Шаповаленко. Возрастная психология. М., Гардарики, 2005г.., էջ 55